

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2016թ. հուլիսի 11-14-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետներ Մայքլ Սթայները և Ալեքս Մինչենկոն Հայաստանի գյուղատնտեսական համատարած հաշվառման գծով խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու և ԱՄՆ-ում գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների տարածման թեմայով շնորհանդեսի ներկայացման նպատակով,
- ✓ 2016թ. հուլիսի 18-29-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների և վիճակագրության գծով միջազգային փորձագետ Վասիլ Պետրեն GCP/ARM/006/EC “ENPARD տեխնիկական աջակցություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը” ծրագրի շրջանակում գյուղատնտեսական համատարած հաշվառման գծով աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. հուլիսի 25-29-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) փորձագետ Վալենտին Տոդորովը ԱՊՀ երկրների համար Հարմոնիզացված արդյունաբերական վիճակագրության գծով տարածաշրջանային նախագծի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2016թ. օգոստոսի 23-26-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետ Կարին Բլիքսը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ» բաղադրիչի «Որակի ապահովում» ենթաբաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2016թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի փորձագետ Մայքլ Սթայները Հայաստանի գյուղատնտեսական համատարած հաշվառման գծով խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2016թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Դանիայի վիճակագրական ծառայության փորձագետ Յեսպեր Ելեմոսե Յենսենը «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ» բաղադրիչի շրջանակում աջակցություն ցուցաբերելու նպատակով: